ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/136

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2019թ. թիվ 26/26-1/13098-18 գրությամբ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (հետայսու՝ Պատվիրատու) 05.08.2019թ. թիվ 01.3/11/18856-19 գրության հիման վրա, 06.08.2019թ. թիվ 26/26-1/13098-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/136 ընթացակարգի շրջանակներում 16.08.2018թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.08.2019թ. թիվ 01.3/11/18856-19 գրությամբ հայտնել է, որ ուղարկվում է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, քանի որ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/136 ընթացակարգի շրջանակներում 16.08.2018թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՍՑ-ՆԳ-2019/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 18.07.2019թ. հայտ է ներկայացրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 28 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր շտկում իրականացնելու համար, սակայն վերջինիս կողմից շտկում չի իրականացվել, որի հետևանքով հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2019թ. թիվ 26/26-1/13098-18 գրությունը, ՀՀ ոստիկանության 05.08.2019թ. թիվ 01.3/11/18856-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 18.07.2019թ. հայտ է ներկայացրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 28 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր շտկում իրականացնելու համար, սակայն վերջինիս կողմից շտկում չի իրականացվել, որի հետևանքով հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մի շարք գրություններով դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ խնդրելով տրամադրել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված գնման հայտը՝ պարզելու համար, թե «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգն արդյոք պետք է կազմակերպվեր «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 02.05.2019թ. N 516-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո առկա կարգավորումներին համապատասխան թե ոչ, քանի որ վերոհիշյալ որոշման համաձայն՝ մասնակցի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն արձանագրվելու դեպքում մասնակցին տրամադրվում է երեք աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու և կոմիտեի

տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը ներկայացնելու համար:

Սակայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ ՀՀ ոստիկանության կողմից չի տրամադրվել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման հայտը, ինչով պայմանավորված արձանագրում եմ, որ գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը հնարավոր չէ իրականացնել, մասնավորապես՝ արձանագրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Նման պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ արձանագրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12712-2019 գրությամբ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**